

Ա. Պոկալիս



ԱՎԱՋԱԿ ՅԵՂԲԱՅՐՆԵՐ

ԴԵՏՐՈՒՍ

19 NOV 2010

22 JUN 2011

89R71

Դ - 37

մի

Ա. Ա. ՊՈՒՇԿԻՆ

ԱՎԱԶԱԿ ՅԵՂԲԱՑՐՆԵՐ



ՊԵՏՀՐԱՍ

ՀԼԿՅԵՄ Կ. Կ. ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ-
ԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937

25 JUL 2013

12996



200

38



Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

Այն յերամը չեր սև աղռավների
 Իջել քայքայվող վոսկրակույտերին,
 Վորդայից այն կողմ, խարույկի չորս դին,
 Խումբն եր հավաքվել շրջմոլիկների:
 Ինչպիսի՞ խառնուրդ դեմքի, ըզգեստի,
 Ցեղերի, լեզվի և ունեցվածքի,
 Հյուղերից մթին, խուցերից բանտի
 Ցեկել են նրանք հանուն վաստակի:
 Այստեղ ամենքի նպատակն ե մէկ
 Ապրում են նրանք ազատ, անորենք.
 Աչքի յեն ընկնում ահա նրանց մեջ՝
 Նա, վոր փախել ե Դոնից ոազմատենչ,
 Ցեվ նրանք՝ հրյան գանգուր, սեահեր,
 Տափաստանների վայրի վորդիներ,
 Ղալմուխն ու բաշկիրն այլանդակ, տղեղ,
 Շիկահեր Փիննը և միշտ տեղից տեղ
 Պարապ ծուլությամբ թափառող գնչուն:
 Արյուն, և վտանգ, և խարեռություն
 Կապն են ահավոր այդ ընտանիքի:
 Նա յե նրանցը, ով հոգով իր քար
 Անցել ե ամեն աստիճան վոճրի,



Նա, ով մորթում է ձեռքերով իր սառ
Այրի կնոջն ու վորբուկին թշվառ,
Ծաղրով է նայում մանուկի լացին,
Ով չի խնայում, յերեք չի ներում,
Ում սպանությունն է խնդություն բերում,
Ինչպես տեսության ժամը սիրածին:

2

Լոեց ամեն ինչ: Լուսինը դժգույն
Իր լույսն եր սփռում նրանց յերեսին,
Յեվ գավաթը լի զինով փրփրուն
Անցնում է մեկի ձեռքից մյուսին:
Ահա տարածված կոչտ, խոնավ գետնին
Ննջում են վոմանք խավարում զգաստ.
Յեվ յերազներն են ահա չարիմաստ
Սավառնում նրանց հանցավոր դլիին:
Վոմանց ել զբույցն հանդարտ ու կամաց
Կարճում են պարապ ժամը դիշերի...
Յեվ ահա խումբը շրջան բոլորած
Զբույցն ե լսում մի նոր յեկվորի:

3

«Մենք յերկուս եյինք: Յեղբայրս և յես:
Մեկտեղ աճեցինք: Պահեց, սնեց մեզ,
Մեր մանկությունը—ընտանիքն ոտար:
Մեր մանուկ կյանքում ուրախ որ չկար:
Արդեն գիտեյինք ձայնը կարիքի,
Դառն արհամարանք կրեցինք մենք շատ
Յեվ վաղ վրդովվեց մեր մանուկ հոգին
Դաժան նախանձի տանջանքն անընդհատ:

Վոչինչ չմնաց վորբերիս համար
Վոչ հո՛ղ, վոչ խրձի՛թ. մանուկ հաստկից
Հոգսի մեջ եյինք ու միշտ վշտահար.
Վերջը ձանձրացանք մեր այդ վիճակից:
Համաձայնության յեկանք միմյանց հետ,
Փորձելու մի այլ վիճակ այսուհետ:
Ըսկեր ընտրեցինք մեզ համար ընդմիշտ
Գիշերը կավար և դաշույնը սառ,
Մոռացանք ընդմիշտ և յերկշանք, և վիշտ,
Խիզն ել մեզանից վանեցինք իսպառ»:

4

Ա՛խ, ջահելություն դու բուռն ու կտրիճ.
Մեր կյանքն այն պահին լավ եր և ուրախ,
Յերբ մեր կորուսոր հեղզելով անվախ,
Մենք կիսում եյինք մեր մեջ ամեն ինչ:
Ու յերբ վոր պայծառ լուսինն եր ծագում
Շըջում ու կանգնում յերկնի մեջաեղում,
Թագստից գեղի մենք անտառը խոր
Գնում արհեստին մեր վտանգավոր
Ու սպասում եյինք ծառի հետեւլում՝
Զի՞ գալիս արդյոք ճանապարհով մութ
Խղճուկ քահանա, կամ հարուստ ջուկ,
Կողոպտում եյինք, ամեն ինչ տանում:
Յերբեմն ել խորին գիշերով ձմռան,
Նորից յեռածի մեր կառքը լծած,
Մենք յերգում, սուլում ու նետի նման
Ջյան շեղջերն եյինք կտրում սրբնթաց:

Ո՞վ չեր սարսափում մեր հանդիպումից . . .
Հենց վոր տեսնելինք մի լույս պանդոկից,
Այնտեղ ենք արագ, անհապաղ թռչում,
Բաղիսում ենք արագ, անհապաղ կանչում,
Զրի ուսում ենք, խմում ու յերգում,
Վառ աղջիկներին փաղաքշում, գրկում»:

4

Յեկ ի՞նչ: Քաջերը վերջապես ընկան,
Շատ չտելեցին քեֆերը նրանց:
«Ու մեղ բոնեցին.— Պարբիններն յեկան
ինձ ու յեղբորս գամեցին միմյանց:
Պահակն ել տարավ մեղ բանտը մթին»:

5

«Յես ավագն եյի ու մեծ հինգ տարով,
Տանջանքն առավել տարա, հաղթեցի:
Հեղձուկ ողի մեջ, կապված շղթայով,
Նա ուժից ընկավ, յես վողջ մնացի:
Ծանր չնչելով, թախծից հալ ու մաշ,
Տենդի մեջ յեղբայրս գլուխն իրեն քաշ
Ծանր հենելով իմ ուսին, մաշվում,
Մեռնում եր, հաճախ կրկնելով այսպես՝
«Ծանր ե ինձ ողը . . . անտառն եմ ուզում . . .
Զուր ինձ, ջուր տվեք . . .» իզուր, իզուր յես
Հեղ տառապալալին ջուր եյի մեկնում:
Բայց նա տանջվում եր կրկին ծարավից,

Քրտինքն եր հոսում անվերջ վրայից:
Երյունն ու միտքն եր նրա բորբոքում
Տանջալի ջերմը թունավոր ցավի.
Յեկ նա այլևս ինձ չեր ճանաչում
Ու ամեն վայրկյան իր մոտ եր կանչում
Մի այլ ընկերոջ, այլ բացեկամի:
Զառանցում եր նա՝ «զու ո՞ւր հեռացար,
Ո՞ւր ծածուկ ճամբագ քեզ առաջնորդեց,
Ինչո՞ւ յեղբայրս ինձ մենակ թողեց,
Հեղձուկ ողի մեջ այս բանտում խավար.
Նա չե՞ր վոր խաղաղ վայրից ու կյանքից
Հրապուրեց դեպի անտառը մթին,
Գիշերով այնտեղ սովորեցրեց ինձ
Մարդասպանության վոճիրն առաջին:
Այժմ առանց ինձ լայնածիր, արձակ
Դաշտում շրջում ե ազատ, համարձակ,
Լախտը ծանրաշարժ շարժում ե ողում,
Յեկ տարված բախտովն իր նախանձելի,
— Նա՛ ընկերոջն ե մոռացել բանտում . . .»
Բոնկում եր մերթ նրա մեջ կրկին
Արթնացած խղճի խայթը տանջալի,
Ամբոխվում եյին տեսիլքն ահոելի
Յեկ մատով նրան ըսպառնում հեռվից:
Այն խեղճ ծերուկին հաճախ ամենից,
Վորին մորթեցինք մեր ձեռքով մի որ,
Տեսնում եր իր գեմ նա մտամոլոր:
Հիվանդն աչքերը փակելով ձեռքով
Այսպես եր ինդրում ծերուկի համար՝

«Ի՞նայիւր նրա արցունքները ծով,
 Յեվ որ ծերության մի սպանիր նրան,
 Զառամյալ ճիշն է նրա սարսուալից...
 Թող նրան, չկա վտանգ նրանից,
 Չկա նրա մեջ տաք կաթիլ արյան.
 Մի ծաղրիր ճերմակ մազերը նրա,
 Մի տանջիր նրան... գուցե մեղմի նա
 Մեղ համար աստծո զայրույթն աղոթքով»:
 Յես լսում եյի, վախն իմ հաղթելով.
 Կամեցա զսպել արցունքները այն,
 Վանել նրանից զառանցանքն ունայն:
 Տեսնում եր մեռած մարդկանց պարելիս,
 Վոր խուլ անտառից բանտ եյին զալիս,
 Շուկն եր լսում նա մեռածների,
 Մոտիկ դոփյունը հալածողների,
 Յեվ ահաբեկված հայացքն եր չողում,
 Մազերն եյին ցից կանգնում տեղի պես,
 Նա, վորպես տերեւ, սարսում եր, դողում,
 Թվում եր նրան՝ տեսնում ե կարծես
 Հրապարակներում մարդիկ խոնված,
 Մահավայր տանող ահավոր ուղին
 Յեվ խարազանը, և դահիճներին...
 Անզգա, ահի դողով բռնված
 Բնկնում եր յեղբայրը իմ կրծքին հաճախ:
 Այդպես շատ որեր, գիշերներ անցան,
 Չկար ինձ համար մի վայրկյան խաղաղ,
 Մեր աչքերն քուն յերբեք չունեցան»:

6

«Զահելությունը համառեց, հաղթեց,
 Յեղբորս ուժերը կրկին յեկան հետ,
 Նա առողջացավ ու վոտքի կանգնեց,
 Մեվ մղձավանջը հեռացավ անհետ:
 Հարություն առանք: Մեզ այն ժամանակ
 Մեր նախկին կյանքի կարուն եր մաշում,
 Մթին անտառն եր նորից մեղ քաշում,
 Մենք տենչում եյինք դաշտի ողն անհագ:
 Նողկալի յեր մեղ խավարք բանտի,
 Լույսը թափանցող վանդակից այն փակ,
 Շղթայի ձայնը, կանչը պահակի,
 Մեղմիկ շրջյունը սուրացող հավքի»:

7

«Յեվ շղթայակապ մի որ քաղաքում
 Մենք վողորմություն եյինք հավաքում
 Մեր քաղաքային բանտատան համար:
 Յեվ վորոշեցինք լուության դրկում
 Կատարել իղձը մեր հին, մշտավառ:
 Գետն եր այն կողմը վարար, աղմկում,
 Մենք գեպի այստեղ-բարձրաբերձ ափից
 Նետվում ենք ջուրը խոր, աղմկալից:
 Շղթաներն են մեր ծանր հեծեծում,
 Մեր պիրկ վոտքերով ալիքն ենք ծեծում,
 Տեսնում ենք ահա ավազոտ կղզյակ,
 Պատուում ենք գետի ջրերը արագ»

Այնտեղ ենք լողում: Յեկ մեր հետեից
 Զայներ ենք լսում՝ «բոնեցեք, վախան»:
 Լողում են հեռվում յերկու պահապահ,
 Բայց կղզին ենք մենք արդեն վոտք դնում,
 Մեր շղթաներն ենք քարով կոտրառում,
 Ծվենն ենք պատռում մենք մեր շորերի՝
 Արդեն ծանրացած գետի ջրերից,
 Հետապնդումն ենք տեսնում հետեւից,
 Սակայն նստում ենք լի հույսով արի
 Յեկ լուռ սպասում: Մեկն ալիքներում
 Սուզվում ե արդեն, տնքում, թուլանում
 Յեկ, վորպես արձիճ, ջրում չքացավ:
 Մյուսը գետի խորությունն անցավ
 Չեռքին հրացան, լող տալով համառ,
 Յեկ նա աղաղակն չլսելով իմ,
 Գալիս եր սակայն մոլեզին թափով.
 Թռչում ե նրա գլխին յերկու քար:
 Արյունը հորդեց, գորշ ալիքներում
 Նա սուզվեց-ու մենք նորից ջրերում
 Լող տալով յելանք ափը փրկարար,
 Մեզ հետապնդել չեղավ ել հնար,
 Անտառ զնացինք: Բայց յեղբայրս հետ...
 Պաղ ջուրը գետի, աշնան ցուրտ ու մեղ
 Ջրկեցին նրան վերջին ուժերից,
 Կրկին ցավը հին նրան տապալեց
 Յեկ մղձավանջը այցելեց նորից:
 Յերեք որ մնաց նա լուռ մահիմերձ,
 Քուն չեկավ յերեք նրա աչքերին,

Բայց չորրորդ որը սուզված մտքերում
 Կանչեց ինձ տիտը ու ձեռքըս սեղմեց:
 Յես աեսա նրա մարզող հայացքում
 Նրա թոթափող տանջանքը այն մեծ.
 Դալկացած ձեռքը ցնցվեց իմ ձեռքում,
 Հառաչեց նա խուլ ու կրծքիս նիրհեց:

8

«Սառած դիակի կողքին մնացի
 Ու յերեք գիշեր չբաժանվեցի,
 Սպասում եյի դեռ, գուցե հանկարծ նա
 Աչքերը բանա, քնից արթնանա:
 Յեկ դառը լացի: Հեառ վերջապես
 Բահը ձեռքս առա ու շիրմի մոտ յես
 Աղոթք կարդացի հոգով մեղսագին,
 Հողին հանձնեցի հետ յեղբորըս գին,
 Ապա ամեհի իմ վորսին նախկին՝
 Գնացի մենակ... ինձ համար սակայն
 Տարիներն անցած ել չկան, չկան:
 Գիշերոթները, խնջույքներն ուրախ,
 Ասպատակները անզուսպ ու անվախ
 Բոլորը յեղբորըս շիրմն ե խլել,
 Թափառում եմ յես մռայլ, միայնակ,
 Քարացել ե իմ հոգին դժնղակ,
 Ու խիղճն ե վաղուց իմ սրտում մեռել:
 Բայց խորշոմներն եմ յերեմն խնայում,
 Ծերուկի մորթել սոսկում եմ հիմա.

Այժմ իմ ձեռքը ել չի բարձրանում
 Անպաշտպան, ձերմակ մազերի վրա:
 Հիշում եմ ինչպես այն դաժան բանտում,
 Շղթայով կապված յեղբայրս ուժասպառ,
 Անզգա ընկած, թաղծոտ ու տրտում
 Աղերսում եր ինձ ձերուկի համար»:

Պատ . խմբագիր՝ Ս . Վահունի
 Թարգմ . Ա . Ավետիքյանի
 Տէս . խմբագիր՝ Ան . Գասպարյան
 Սրբագրիչ՝ Ար . Գասպարյան

200
39



Գլամիլիտի լիալոր՝ 4678 . Հրատ .
 4170 . Պատգեր 1003 .
 Տիրաժ 3000 . Թուղթ 72×110 . Տպ .
 1/2 մամ .
 Մեկ մամուլում 40960 նիշ . Հեղինա
 կային 1/2 մամուլ .

ՊԵՏՀԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ , ՅԵՐԵՎԱՆ ,
 ԼԵՒՆԻԻ ՓՈՂ . 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0319959

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

608

891. 41
9-99

А.С. ПУШКИН
БРАТЬЯ РАЗБОЙНИКИ
ГНЗ АРМ. ССР ЕРЕВАН